Հրատարակութիւն „ՆՈՒՅԷ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“
Ընկերութեան № 4

891
Գ-21

ՍՕՖԻԱ ԳԱԼԱՋԵԱՆ

# ԿԱՊԻԿՆԵՐ

## ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ

ԳԱՏԿԵՐԱԶԱՐԴ



087.1
Գ-16

ՔԻՉԼԻՍ
Տպարան օր. Դ. Ալպանեանի, Պոլիս. 7
1913

Հրատարակութիւն „ՆՈՒԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ"
Ընկերութեան № 4

087.1
Գ-16
ԿՂ.

ՍՕՓԻԱ ԳԱԼԱՉԵԱՆ

# 1. ԿԱՊԻԿՆԵՐ

1002/6676

## ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԶՐՈՅՑ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. Պոլսահայ Գրական Դեպք
7/XI—1922
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆ

ԹԻՖԼԻՋ
Էլեկտ. Օր. Դ. Սդամեանցի, Պօլից. 7
1913

Բագուի Հայոց
Հոմիսեմեան Դպրոց
Գրադ.-Ծիսակ. (Օրիորդաց)

# ԿԱՊԻԿՆԵՐ

Մենք ձեզ հետ, փոքրիկ ընթերցողներ, պիտի տեղափոխուենք մտքով մի այնպիսի երկիր, որտեղ ամառ ու ձմեռ միշտ տաք է, որի գետինը պատած է այնպիսի հաստաբուն ծառերով, որ ամեն մինի բունը 12 մարդ ձեռք ձեռքի տուած չեն կարող գրկել։ Այդ տաք երկիրների անտառները լի են հազար ու մի տեսակ կենդանիներով, թռչուններով, բայց այդ երկիրների թռչուններն ու կենդանիները նման չեն մեր երկրի թռչուններին և կենդանիներին։ Մեր երկիրը չունի այդ չափ բազմատեսակ, բազմագոյն թռչուններ, մեզ մօտ չը կայ գեղեցիկ սիրամարգը գեղեցիկ պոչով, թութակը, որին մարդու նման խօսել կարելի է սովորեցնել, ճկոյթի չափ փոքրիկ կոլիբրի թռչունը, որի փետուրները այնքան գոյնզգոյն են, որ թռչելիս թիթեռից չի զանազանուում, և սրանց նման շատ ուրիշ սիրուն թռչուններից զուրկ է մեր երկիրը և եթէ մեզ մօտ որևէ մէկ տեղ դուք պատահէք այդ թռչուններին, դրանք անպատճառ տաք

երկրներից են բերված։ Մեզ մօտ նոյնպէս չը կան այդ երկիրների սարսափելի առիւծները, որոնց մի գոռոցից դողդում ու սարսափում է ամբողջ անտառը, որոնք մի պոչի հարուածով կոտրում են ահագին եղան կամ գոմէշի մէջքը. չը կան ահագին վագրերը, որոնց ճանկերից դժուար թէ մի որևէ կենդանու յաջողւի ազատուել. նա մի բոպէում կենդանու մարմինը պատառ պատառ է անում ու լափում։ Չը կան վիշապանման օձերը, որոնցից ամեն մէկը մի էշի չափ կենդանու մարմինը փշրում, խմոր է դարձնում ու ողջ-ողջ կուլ տալիս։ Չը կան կոկորդիլոսներ, որ մեր մողէսներին են նման, բայց մի քանի հարիւր անգամ մողէսից մեծեն։ Սրանք պահւում են ջրերի ափերում և ձեռքն ընկած կենդանուն, նոյնիսկ մարդուն, մի ակնթարթում կուլ տալիս, և վերջապէս չը կան մեզ մօտ ձեր ամենասիրելի կենդանիները՝ չարաճճի կապիկները, որոնց մի քանի տեսակները մարդուն այնքան նման են, որ հին ժամանակ անւանում էին նրանց անտառամարդ և կարծում էին թէ Աստուած որ մարդու վրա բարկանում է, անիծում է նրան և իսկոյն կապիկ դարձնում։

Այս բոլոր յիշածս կենդանիները ապրում են մեզանից շատ հեռու, ամենատաք երկիրներում։

Ես պիտի պատմեմ ձեզ այդ երկիրների միայն



մի տեսակ կենդանիների մասին, այն է՝ *կապիկների մասին*։

Կապիկները ապրում են երկրագնդիս ամենատաք ցամաքամասերում։ Դուք երևի լսած կը լինէք, որ մեր երկրագունդը ունի հինգ ցամաքամասեր՝ Եւրոպա, Ասիա, Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա։

Կապիկները ապրում են գլխաւորապէս երկու ցամաքամասում՝ Աֆրիկայում և Ասիայի հարաւային մասերում, աւելի քիչ Ամերիկայում։ Հիւսիսային մասերում չը կան, որովհետև այդտեղ ցուրտ է, իսկ մեր չարաճճիները սիրում են շոգ տեղեր, որպէսզի ոչ մի բոպէ չը զրկւեն իրենց քաղցր մրգերից, կանաչ օրօրոցներից, այսինքն՝ ծառերից, և իրենց խաղ ու պարերից։ Իսկ եթէ պատահում է մարդիկ բռնում են դրանցից մի քանիսին և բերում մեզ մօտ, կամ աւելի ցուրտ տեղ տանում, խեղճերը չեն դիմանում, շուտով հիւանդանում են, թոքախտ են ստանում և մեռնում։

Ուրեմն յիշեցէք, որ կապիկները շատ տաք երկիրների և անտառային կենդանիներ են. թէև կան նաև լեռնային կապիկներ, բայց սրանք շատ քիչ են տարբերւում միւս տեսակի կապիկներից, այն էլ գլխաւորապէս նրանով, որ աւելի հեշտ են ցրտին դիմանում, քան անտառայինները։

Կապիկները, ինչպէս կովը, ոչխարը, ձին, դայլը, արջը և այլ կենդանիները, պատկանում

են չորսոտանի կենդանիների թվին, որովհետև սրանց մարմինն էլ յիշածս չորքոտանիների մարմնի նման է կազմված, այսինքն՝ ունի ոսկորներ, կամ կմախք, որը պատած է մսով կամ մկաններով և մորթով, սրանք էլ ունեն թոքեր շնչելու համար, սիրտ, արիւն և արեան խողովակներ մարմինը կերակրելու համար, ատամներ, ստամոքս և աղիքներ կերակուրը մարսելու համար, աչքեր՝ տեսնելու, ականջներ՝ լսելու, քիթ՝ հոտոտելու, լեզու՝ ձայն արձակելու և շօշափելու համար. կապիկների արիւնն էլ տաք է ու կարմիր, և վերջապէս ունեն չորս վերջաւորութիւն մարդ դալու համար։

Կապիկները մարդ են գալիս չորս ոտի վրա՝ գայլի, շան նման, բայց կարող են մարդ դալ և երկու ոտի վրա մարդու նման։

Առհասարակ անտառային կապիկները ոտքերի վրա մարդ դալ չեն սիրում, սիրում են աւելի ծառից ծառ թռչկոտել։

Թռչկոտելու ժամանակ կախւում են նրանք ծառերից և ճիւղերից իրենց չորս ոտքերի օգնութեամբ։ Կապիկները իրենց թէ առաջին և թէ հետևի ոտքերով այնպէս են բռնում ճիւղերից, ինչպէս որ մենք ձեռքերով կը բռնէինք։ Այդ պատճառով կապիկները փոխանակ չորսոտանի կենդանիներ կոչելու—կոչւում են չորս-ձեռանի կենդանիներ։





Չուր խմող շիմպանզէներ

Եւ իսկապէս կապիկի ոտքերը ոտքեր չեն, այլ ձեռքեր են, որովհետև նրա թէ առաջի ոտքերի և թէ ետևի ոտքերի մատները մեր ձեռքերի մատների նման երկար են։ Այդ դեռ բաւական չէ, մեծ կամ բութ մատը մերի նման, թէ ձեռքերին և թէ ոտքերին, բաժանուած է միւսներից և այնպէս ազատ է շարժւում, ինչպէս ձեռքերի վրա։ Հէնց սա է պատճառը, որ նա կարողանում է ոտքով ու ձեռքով միաժամանակ բռնել համեղ խնձորը, մօտեցնել բերանին և անուշ անուշ կծոտել։ Բացի դրանից կապիկների ոտքերը ձեռքերի են նմանում նրանով, որ թաթերի ներսի մասը պատած է քնքոյշ մորթով, այնպէս որ նա երբ իր ափերը գնում է գետնին, գետնի կոշտութիւնը ցաւեցնում է նրա ձեռքերը և նա ցաւից մատները իսկոյն սեղմում է բռունցքի և բռունցքներով է կանգնում, այսինքն կանգնում է թաթերին դրսի երեսով և ոչ ներսի։ Բայց բռունցքների վրա մարդ գալը շատ անյարմար է լինում, ուստի կապիկը գերադասում է թռչկոտալ քան մարդ գալ և թռչելը կապիկի ամենասիրելի զբաղմունքն է։ Նա այնպէս է վարժւած թռչկոտելուն, որ 14—15 արշ. նոյն իսկ աւելի տարածութիւն թռչելը նրա համար սովորական բան է։ Կան կապիկներ, որ գետին են իջնում միմիայն շատ ծարաւ ժամանակ. իսկ մնացած ժամանակը միշտ մի ծառից միւսը թռչկոտելով են

Կապիկներն ու կոկորդիլոսը

ման գալիս և նոյն իսկ թռչկոտելով տեղափոխ-
ւում մի տեղից միւսը։ Իսկ եթէ պատահում է,
որ տեղափոխելու ժամանակ ծառերը շատ հե-
ռու են իրարից և բոլորը չեն կարող թռչելով հաս-
նել միւս ծառին, այդպիսի դէպքերում շատ լաւ
թռչողներից մէկը թռչում է ու ծառից պոչը կա-
խում, յետոյ թռչում է միւսը ու կախւում նրա
պոչից, յետոյ երրորդը դրա պոչից և այդպիսով
մի քանի րոպէով մի ծառից դէպի միւսը կազ-
մըւում է մի կամուրջ և դրա վրայով անցնում
են մնացած կապիկները։

Կապիկների ամբողջ մարմինը, բացի դէմքի
մի մասից, ձեռքերի միջից պատած է մազերով։
Կապիկները բազմագոյնի կենդանիներ են. կան
սև կապիկներ, սպիտակ, մոխրագոյն, խարտեաշ,
արծաթագոյն և այլ գոյների կապիկներ։ Սպի-
տակ գոյնի կապիկները հազւագիւտ են։ Արծա-
թագոյն կապիկը, որի անունը Գելերեցա է, հա-
մարւում է ամենասիրուն կապիկը։ Գելերեցայի
մարմինը ամբողջովին արծաթագոյն չէ. նա իր
մեծ մասով սև թաւշագոյն է, իսկ ճակատից
սկսած, վզի վրայով, կողքերով դնում է երկար
արծաթագոյն շերտը, որը վերջանում է պոչի ծայ-
րին մի մեծ փնջով, և այդպիսով գելերեցան
կարծես սև թաւշեայ հագուստի վրայից արծա-
թագոյն ծածկոց ունենայ գցած։

Կապիկների մարմնի վրայի մազերը տարբեր



երկարութեան են լինում. ոմանց մազերը այն-
քան կարճ են, որ հազիւ հազ են ծածկում նրանց
մարմինը, իսկ ոմանցը այնքան երկար, որ եա-
փունջի նման փաթաթում է մարմինը։ Այդ՝
տեսակ կապիկները հէնց եափնջոտ կապիկներ
էլ կոչւում են։ Եափնջոտ կապիկների անունը
զամաղրիլ է։ Սրանք պատկանում են պաւիան-
ների, այսինքն՝ շնացեղ կապիկների թւին։



Գելերեցա

Կապիկները բազմատեսակ կենդանիներ են։
Կապիկների տեսակների թիւը հասնում է 400-ի։
Օրինակ — կան մարդանման կապիկներ՝ գորիլա,
շիմպանզէ, օրանգ-ուտանգ. շան նման կապիկներ՝
պաւիաններ, կզակապիկներ (мартышки) և այլն։

Կապիկները տարբերւում են իրարից մեծութեամբ։ Ամենամեծ կապիկները մարդանմաններն են, որ մարդահասակ են, իսկ ամենափոքրը նապաստակի մեծութեան է։

Կապիկները բաժանւում են պոչաւորների և անպոչների։ Մարդանմանները գորիլլան և այլն անպոչ են, իսկ Ճացածները առաւելապէս պոչաւոր, թէև կան նրանց մէջ և անպոչներ։

Մի քանի կապիկների դունչը շան նման դուրս ցցւած է, միւսներինը մարդու նման տափակ։

Մի քանի կապիկներ ման են գալիս ետևի ոտքերի վրա, միւսները չեն կարողանում։ Մի քանիսը կարողանում են լող տալ ջրերի մէջ, միւսները ջրից սարսափելի վախենում են։

Կան կապիկներ, որ այտերի մէջ պարկեր ունեն։ Այդ պարկերը նրանք գործ են ածում աւելորդ պաշարը պահելու համար։

Կան կապիկներ, որ կոկորդների մէջ օդապարկեր ունեն ձայնը ուժեղացնելու համար։ Այդ տեսակները կոչւում են գոռացող կապիկներ։ Անտանելի են գոռացող կապիկները առաւօտները, երբ նրանք սովորութիւն ունեն խմբւելու մի քանի 100 հատ միասին և միասին գոռալու։ Այդ գոռոցը գուցէ կապիկների համար դուրեկան համերգ է կազմում, բայց իսկապէս այնքան անտանելի է, որ բոլոր գազանները փախչում են այդ տեղից, իսկ մարդիկ ականջները



խցում և շտապում որքան կարելի է շուտ ազատւել այդ սոսկալի երգեցողութիւնից։

Կապիկների մի քանի տեսակների ձեռքերը այնքան երկար են, որ ետևի ոտքերի վրա կանգնած ժամանակ ձեռքերը գետնին են հասնում, իսկ կան կապիկներ, որոնց ձեռքերը ընդհակառակը շատ կարճ են։



Օրանգ-ուտան

Եւ վերջապէս կապիկներից շատ տեսակները արթուն են մարդու նման ցերեկը, իսկ գիշերը մթնելուն պէս պարկում են քնելու. կան տեսակներ էլ, որ ցերեկը պահւում են բուի և չղջիկի նման փթած ծառերի խոռոչներում, իսկ

գիշերը դուրս են գալիս քնած թռչուններ և միջատներ որսալու։

Սակայն չը նայած այս բոլոր տարբերութիւններին, բոլոր կապիկները նման են իրար հետևեալ յատկութիւններով։

Կապիկները նման են իրար իրանց ատամների կազմով։ Մեծ մասի ատամները մարդու նման թիւով 32 հատ են և կազմուած են՝ կտրիչ, ժանիք և սեղանատամներից։ Կապիկների ատամները չափազանց խոշոր և սուր են, մանաւանդ ժանիքները, որոնք շան և գայլի ժանիքների նման ուղղակի դուրս են ցցուած։

Կապիկների ատամները այնքան սուր են, որ պատմում են թէ ինչպէս մի կապիկ մի որսորդի ուսը այնպէս էր կծել, որ միսն ու ոսկորը միասին էր պոկել։

Բոլոր կապիկների ճակատը շատ նեղ է, աչքերը բարկացկոտ, ծնոտները դուրս ցցուած, շրթունքները բարակ, ականջները փոքր։

Կապիկների դէմքը չափազանց շարժուն է՝ նրանց դէմքի վրա, ինչպէս և մարդու դէմքի վրա, իսկոյն նկատելի է թէ ուրախութիւնը, թէ բարկութիւնը, թէ տխրութիւնը և թէ անբաւականութիւնը։ Պատմում են նոյն իսկ որ կապիկը լաց է լինում։ Օրինակ՝ պատմում են թէ ինչպէս մի կապիկի զաւակը մեռնելուց յետոյ, մայր կապիկը քաշւել էր մի անկիւն և որ-





Գորիլա

խուր արտում նստած ոչ ուտում՝ ոչ խմում էր, միայն լաց էր լինում, այսինքն արտասուքներ էր թափում։

Բնաւորութեամբ կապիկները նոյնպէս նման են իրար, չափազանց անհանգիստ, բարկացկոտ, վրէժխնդիր, գող, ագահ, կամակոր և ամեն կենդանու շարժուձեր շուտ վերցնող և նմանեցնող։ (Հէնց այդ է պատճառը, որ եթէ մի մարդ մի բանում նմանեցնում է մէկին, ասում են՝ կապկութիւն է անում)։ Օրինակ՝ մի դիտնականի մօտ մի ծերունի հիւր է գալիս։ Տան տէրը կանչում է իր կապիկին և ասիպում որ նա ցոյց տայ հիւրին իր բոլոր շնորհքը։ Կապիկը մի քանի բան անելուց յետոյ մօտենում է հիւրին, վերցնում ձեռքից ձեռնափայտը, գլխից գլխարկը և իր գլխին դնելով, մէջքը կռացնելով, քայլում է սենեակի մէջ ճիշտ այդ հիւրի նման։

Գերութեան մէջ, այսինքն՝ երբ կապիկները բռնւում են, մարդիկ օգտւում են նրանց այդ յատկութիւնից և զանազան ծիծաղաշարժ բաներ սովորեցնելով՝ շրջում են կապիկների հետ դռնէ դուռը և այդպիսով փող վաստակում։

Այդտեսակ կապիկներ դուք շատ կը լինէք տեսած, բայց դժբախտաբար դրանց մէջ ոչ մի մարդանման կապիկ չը կայ. բոլորը պատկանում են փոքրահասակ պոչաւոր կապիկների,



կզակապիկների ցեղին, որովհետև սրանք աւելի լաւ են դիմանում մեր ցրտերին, քան միւս տեսակները։

Կերակրւում են կապիկները մարդու նման և մսեղէն, և բուսեղէն, և կաթնեղէն կերակուրներով։ Ընտանեցրած կապիկները ուտում են այն բոլորը, ինչ որ մարդն է ուտում. չափազանց սիրում են՝ ձու, կաթ, կակաւ, գինի և քաղցրեղէն, մանաւանդ շաքար։ Դուք երևի տեսած կը լինէք, որ շրջիկ կապիկներին միշտ շաքար են գցում և կապիկը ստանալուն պէս անմիջապէս ուղղում է իր բերանը։

Ագատ կապիկները կերակրւում են պտուղներով, հացահատիկներով. եգիպտացորեն, բրինձ, ընկոյզ, արմատներ, թարմ ճիւղեր, բողբոջներ, սեխ, կաղամբ, դդում և այլն — այս բոլորը կազմում է կապիկների սիրելի կերակուրը։ Տաք երկիրների անասնման անտառները իրանց ամեն տեսակ բոյսերով, պտուղներով, թռչունների ձաններով և փոքրիկ ձագերով կազմում են կապիկների մառանները և ամբարները։ Իսկ եթէ անտառում բաւականին կերակուր չէ գտնւում, նրանք հաւաքւում են իսկոյն հարիւրներով և յարձակւում մօտակայ դիւղերի, արտերի, ցանքերի, բանջարանոցների, այգիների վրա և սարսափելի աւերում առաջ բերում ներս մտած տեղը։ Այդ անպիտանները էլ իմ ու քո չեն անում, մտնում են

1002 / 6679

ամեն տեղ. էլ ոչ բարձր պատերով, ոչ թոկերով, ոչ կողպէքներով չեն կարողանում մարդիկ մի բան պահել կապիկներից, բոլոր այդ արգելքներին կարողանում են կապիկները յաղթել. իրանց ճարպիկ ձեռքերով մարդու նման կռռում են, ջարդում, ետ անում, պոկ տալիս, ցանկապատից թռչում, ջրերը լող տալիս և հասնում այնտեղ, որտեղ նպատակ էին դրել. հասնելուն պէս, կարճ ժամանակում պոկ են տալիս բոլոր պտուղները և ջոկջոկատելով նրանց միջից ամենալաւերը, որը ուտում, որը լցնում այտերի եաեի պարկերը, որն էլ բարձում իրենց վրա աւար անում, մնացածն էլ կոխ տալիս փչացնում ու յետոյ մինչև բնակութեան տեղը մէկ փախչում։ Պատահում է, որ մի օրւայ մէջ կապիկները փչացնում են տասնեակ գիւղացիների ամբողջ տարւայ ապրուստը և խեղճ գիւղացին մնում է ձեռքերը խաչած, քաղցած ծարաւ։ Այս պատճառով գիւղացիները չափազանց ատում են կապիկներին և նրանց արշաւանքը Աստծու պատիժ են համարում, որովհետև խեղճերը ցանում են, իսկ նրանք հնձում։

Բոլոր կապիկները, բացի մարդանմաններից, (գօրիլա, շիմպանզէ, օրանգ-ուտանից) ապրում են մեծ մեծ խմբերով։

Բնակութեան տեղ իրենց համար ընտրում են կամ գիւղերին մօտիկ անտառները, որ կարողանան այդտեղից շատ շուտ յարձակւել ցանքերի վրա, կամ անտառների ամենապտղատու մասերը։ Բայց կապիկները միևնոյն տեղում երկար չեն ապրում, մնում են այնքան, մինչև որ այդտեղի կերակուրը սակաւանայ, փչանայ. հէնց որ նկատեցին այդ, խմբով ժողովւում են և տեղափոխւում մի ուրիշ տեղ։

Պէտք է ասեմ, որ կապիկների խումբը իրեն մի առաջնորդ է ունենում միշտ և ոչ մի քայլ չէ անում իր բնակութեան տեղից առանց առաջնորդի հրամանի։ Վայ նրան, ով առաջնորդի հրամանից մի քիչ կը շեղւի, առաջնորդը, ամենից ուժեղը և քաջը լինելով, այնպիսի մի քոթակ է տալիս անհնազանդին, որ նա երկար ժամանակ չի մոռանայ։ Առաջնորդն է որոշում, թէ խումբը ինչ տեղ բնակութիւն հաստատէ։ Նա է հրամայում թէ ուր գնան աւարի և աւազակութեան, նա է հսկում, զգուշացնում և ազատում խմբին վտանգից, նա թոյլ չի տալիս որ իր խմբից մէկին ու մէկին մի բան պատահի։ Օրինակ՝ մի անգամ, երբ կապիկների մի խումբ անցնում էր մի տեղից միւսը, որսորդների շները յարձակւեցին կապիկների վրա։ Առաջնորդը խմբով ժողովեց ուժեղ կապիկներին և շրջապատեց շներին և չը թողեց իրանց շրջանից դուրս, մինչև թոյլերը և մայրերը ձագերի հետ փախան բարձր տեղերում նստեցին։ Բայց երբ իրանք էլ անվտանգ փախան

գնացին, տեսան որ ձագերից մէկը մոռացել է շների մէջ, Իսկոյն առաջնորդը մինչև որսորդների հասնելը անվախ մենակ վերադարձաւ ու փախցրեց փոքրիկ ձագին շների բերանից։

Առհասարակ կապիկները չափազանց ընկերասէր են։ Նրանք հենց որ զգում են թէ ընկերներից մէկն ու մէկին վտանգ է սպառնում, իսկոյն խմբւում են, յարձակւում են ընկերոջ թշնամու վրա և այնքան տանջում նրան, մինչև որ կազատեն ընկերոջը։ Կապիկները նոյն իսկ մեռած ընկերոջը չեն թողնում թշնամու ձեռքին։

Պատմում են ինչպէս մի որսորդ սպանում է կապիկներից մէկին և տանում իր վրանը։ Կապիկների խումբը չի հեռանում այդ տեղից. իսկոյն քաջ առաջնորդը մի քանիսի հետ մօտենում է վրանին և այնպէս նայում մարդկանց, որ կարծես ուզում էր ասել՝ տուէք ինձ իմ ընկերոջ դիակը։ Որսորդը նշան է անում նրան մտնելու վրանը։ Առաջնորդը իսկոյն ներս է մտնում անվախ. շալակում ընկերոջ դիակը և փախչում այդ չարաբաստի տեղից։

Առհասարակ, մարդուց յետոյ կապիկներն են համարւում ամենախելօք կենդանիները։

Նրանց խելօքութեան մասին շատ պատմութիւններ կան, բայց ես կը պատմեմ միայն մի քանիսը։

Առաջնորդ գամադրիլը ազատում է փոքրիկին որսորդական շներից

Մի մարդանման կապիկ ցանկանում է իր տիրոջը օգնել։ Դեպքը լինում է նաւի վրա, իսկ տէրը նաւի հացթուխն էր։ Կապիկը դիտում է և լաւ ուսումնասիրում թէ տէրը ինչպէս է վառարանը վառում և երբ է հացերը ներս դնում, ու մի օր տիրոջ փոխարէն վառարանը վառում է և երբ ժամանակն է լինում, դնում է տիրոջը յայտնում, որ արդէն ժամանակ է հացերը ներս դնելու։ Այդ օրւանից հացթուխը ազատւում է այդ աշխատանքից։

Կապիկները այնքան խելօք կենդանիներ են, որ չեն մոռանում մարդու արած լաւութիւնը և չափազանց վրէժխնդիր լինելով չեն էլ մոռանում նրանց արած վատութիւնը։

Ահա ձեզ մի լաւութեան օրինակ. մի կոյր ջուլթակահար շրջելիս է լինում միշտ մի կապիկի հետ, որը նւագելուց յետոյ ժողովում էր փողերը և տիրոջը տալիս։ Մի տիրուն տղայ, որը ըստ երևոյթին հարուստի տղայ էր, որովհետև նրա գլխարկը մարգարիտով և ոսկով էր կարած, ամեն օր կապիկին փող էր տալիս։ Մի օր, երբ կապիկը մօտենում է դրան, յանկարծ այդ տղան սարսափելի ճիչ է արձակում։ Բանից երևաց, որ տղայի գլխարկը մէկը խլել փախցնում էր։ Կապիկը իսկոյն հասնում է չարագործին և այնքան կծում, ապտակում, կսմտում նրան, որ նա



ետ է տալիս գլխարկը։ Կապիկը դարձնում է գլխարկը տղային։

Ահա ձեզ և վրէժխնդրութեան մի օրինակ՝ մի տղայ շատ էր սիրում մի կապիկի բարկացնել, չարչարել։ Կապիկը այդ բոլորը միտն է պահում և մի օր, երբ տղան մաքուր շորեր է հագնում, որ հիւր գնայ, կապիկը ծածուկ գնում է փողոց, մի քանի գունդ ցեխ է ժողովում և երբ տղան անցնում է մօտից, բոլոր ցեխը վրան նետում և շորերը կեղտոտում։ Զարհանքի կապկի դէմքը դրանից յետոյ ուրախութիւն էր արտայայտում։

Կապիկը մարդու նման տարէնը մի զաւակ է ծնում և իր կաթով մեծացնում։ Կապիկները չափազանց սիրում են իրենց զաւակին և եթէ մայր կապիկը կորցնում է իր զաւակին, այսինքն զաւակը կամ մեռնում է, կամ նրան բռնում են, այնքան է տխրում, դարդ անում, որ վշից մեռնում է։

Ամեն մի մայր կապիկ, զաւակը ծնելուց յետոյ, ամբողջ երկու շաբաթ կրծքին սեղմած է պահում և ոչ մի բոպէ բաց չէ թողնում նրան։ Փոքրիկ կապիկը իր առաջի թաթերով փաթաթւում է մօր պարանոցով, իսկ ետևի թաթերով ամուր կպչում կրծքին։ Երկու շաբաթից յետոյ մայրը թոյլ է տալիս նրան բարձրանալ իր մէջքին, ինքը վերցնում է գիրկը, օրօրում, փայ-

վայում, համբուրում, գուրգուրում, իր բերանի ամենահամեղ պատառը նրա բերանը դնում, տանում գետը, նույն իսկ լողացնում, որովհետև կապիկները շատ մաքրասեր են, նրա վրայի միջատները ոչնչացնում, մաքրում։

Երբ կապիկը մի փոքր մեծանում է, մայրը նրան թույլ է տալիս իր ընկերների հետ խաղալու, բայց ոչ մի րոպե աչքը չէ հեռացնում նրանից, որ չը լինի թէ նա անկարգութիւն անի և եթէ իսկապէս նա անկարգութիւն է անում, մայրը վրա է հասնում, կմշտում, ապտակում նրան և այդպիսով խրատում զաւակին։ Բայց պատժելու քիչ դէպքեր են լինում, որովհետև կապիկի ձագերը շատ հնազանդ և լսող են։

Մայր կապիկը հսկում է միշտ, որ չը լինի թէ մի վտանգ սպառնայ իր զաւակին, և հէնց որ մի բան է ականջը ընկնում, վերցնում է զաւակին և իսկոյն փախցնում այդտեղից։ Իսկ եթէ պատահում է կապիկին սպանում են, մայրը մինչև վերջին շունչը իր զաւակի մասին է մտածում։

Մի անգամ մի որսորդ անտառի մէջ մի մարդանման կապիկի է հանդիպում իր երկու զաւակի հետ միասին և իսկոյն հրացանը պարպում է մօրը վրա։ Կապիկը ժողովում է իր վերջին ուժերը, մի զաւակին հասցնում ծառի գագաթը, ետ դառնում, որ միւսին էլ տանի,

Մայր կզակապիկները հսկում են մանուկների խաղերին

բայց ուժերը չեն ներում և նա ընկնում է։ Մեռնելուց առաջ, նա մի ձեռքով գրկում է մնացած զաւակին, իսկ միւս ձեռքով վերքը սեղմում ու արիւնոտ ձեռքը որսորդին ցոյց տալիս։ Որսորդի սիրտը կարաւում է այդ տեսարանից։ Նրան թւում է թէ իր առաջ մի մարդ է մեռնում և ինքը մարդասպան է։ Այդ օրւանից նա այլևս կապիկ չի սպանում։

Կապիկները ոչ միայն իրենց հարազատ զաւակներին են սիրում, այլ և բոլոր որբացած փոքրիկ կապիկներին, որոնց միշտ որդեգրում են և հարազատ զաւակներից պակաս չեն խնամում։ Առհասարակ կապիկները փոքրին շատ են սիրում, լինի դա կապիկ, շուն, կատու, մարդ, միևնոյն է, հետները շատ քնքոյշ են վարւում, երբէք վնաս չեն տալիս։

Կապիկները ոչ մի գազանից չեն վախենում, նոյն իսկ զինւած մարդուց էլ չեն վախենում, որովհետև բոլորի հախից կարողանում են գալ. նրանք մի միայն օձերից են վախենում։

400 տեսակի կապիկների մէջ ամենից ուշագրաւը մարդանման կապիկներն են և կզակապիկները (мартышки)։

Մարդանմանները երեք խմբի են բաժանւում՝ գորիլա, շիմպանզէ և օրանգ-ուտան։

Գորիլան բոլորի մէջ ամենաուժեղը և ամենաչար կապիկն է, ուստի նա չի սիրում



խմբերով ապրել. ապրում է մարդու նման ընտանիքով՝ էգը, արուն և զաւակները։ Գորիլայի հասակը մարդուց բարձր է, թիկունքը լայն, ոտքերը կարճ, ձեռքերը երկար, ժանիքները դուրս ցցւած։ Սա ապրում է անտառում, որտեղ իր համար թարմ ճիւղերից բունն է հիւսում, բայց բնի մէջ գիշերում է էգը զաւակներով, իսկ արուն կանգնում է նոյն ծառի տակ, մէջքը դէմ տալիս ծառի բունին և այդպիսով ամբողջ գիշերը հսկում իր ընտանիքին։

Բայց գորիլան առանձին վախենալու էլ ոչինչ չունի, նա ինքը ձեռքը ընկած գազանին և մարդուն պատառ պատառ կանի։ Պատմում են, որ գորիլայի ապրած անտառներով մարդիկ վախենում են անցնել, որովհետև եթէ գորիլային ծառի վրա հանդիպեն, նա կը կռանայ և անակնկալի կերպով կը բռնի մարդու մազերից, վեր կը քաշի և այնպէս գետնովը կը տայ, որ մեծ պատառը ականջը կը մնայ, եթէ գետնին հանդիպեն և հրացանը վրիպեց, վայը եկել է և այդ մարդուն տարել, գորիլան մի ակնթարթում նրա մարմինը պատառ-պատառ կանի։ Առհասարակ գորիլան սարսափելի կենդանի է և նրան բռնելը չի լինում։

Միւս մարդանման կապիկները նրա չափ ահռելի չեն, բայց նրանց հետ էլ կռւելը շատ դժւար է լինում։ Սակայն նրանց, ձեռք ընկած

դէպքում, աւելի հեշտ է լինում ընտանեցնել, քան գօրիլային։ Միայն մարդանման կապիկները մեր կլիման բոլորովին չեն վերցնում և շուտով թոքախտից մեռնում են։ Ինչքան էլ խնամքով հոգ տանեն, մարդանմանների կեանքը մեզ մօտ երկու տարուց աւել չի քաշում։

Միւս կապիկներն էլ մեզ մօտ 12—15 տարուց աւելի չեն ապրում, իսկ իրենց անտառներում քառասունին դուցէ մօտենան։

Առհասարակ կապիկները շատ ազատասէր կենդանիներ են և նրանց վրա ազդում է ոչ միայն կլիմայի ցրտութիւնը, այլ և փակուած սենեակի կեանքը, այսինքն՝ գերութիւնը, իրենց հարազատներից անջատուելը։

Այսպիսով դուք տեսաք, որ կապիկները բոլոր կաթնասուն կենդանիների մէջ իրենց մարմնի կազմով, բնաւորութեամբ ամենից շատ են նման մարդուն, բայց մարդու համար ոչ մի օգուտ չեն բերում, բացի անթիւ վնասներից, ուստի կապիկները առայժմ համարւում են ամենավնասակար կենդանիներից մէկը։

---

Հ.Ս.Խ.Հ. ՀԻՆՐԱՅԻՆ ... 7/XI—1922 ... имени А. Мясникяна Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Բագուի Հայոց Հոգևոր Դպրոց

## „ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

### Ընկերութեան հրատարակութիւնները

1. Գատցուկ. Ամիրան Դարեջանիձէ, թարգմ. Ա.Թ. Խնկոյեան . . . . . 25
2. Սէյրի. Դերձակի աշակերտը, պիէս . . 10
3. Աղէքսն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—պսակ—պատկերազարդ հեքիաթներ . . 10.
4. Ս. Գալաշեան. Կապիկներ, բնագիտական պրոյց . . . . . 10

Դիմել «Հասկերի» խմբագրութեանը. Тифлисъ, редакція „Аскеръ“.

## «ՀԱՍԿԵՐԻ» ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1. Հեղ. Մելիք-Հայկազեան, Քսան օր գեանի տակ 20 կ.
2. Օսկար Ուայլդ, Պրինցն ու ծիծեռնակը . . . 20 կ.
3. Ստ. Լիսիցեան. Բաջ ճամբորդներ . . . . . 25 »
4. Աթ. Խնկոյեան. Գիւղացին ու արջը . . . . 25 »
5. Ստ. Լիսիցեան. Բաջ զինուորներ, պիէս . . . 8 »
6. Ռ. Պատկանեան, Զախու . . . . . 20 »
7. Ստ. Լիսիցեան. Սոված գայլը . . . . . 10 »
8. Կլաւդիա Լուկաշևիչ. Քեռի Մկо . . . . . 20 »
9. Կարլ Էվալդ. Երկիրն ու դիտասաղը . . . . . 12 »
10. Կապուան. Ֆիօրէ փերին, Ասեղ. . . . . 12 »
11. Իւանովիչ. Աւօենց Ստեփանը. . . . . 20 »
12. Կ. Լուկաշևիչ. Ծաղիկների մէջ. . . . . 12 »
13. Աթ. Խնկոյեան. Աղէքսն ու արջը. . . . . 20 »
14. Նիկ. Սարգսեան. Կենդանիների գոյները . . 15 »
15. Բրետ Հարտ. Մլիս. . . . . 12 »
16. Է. Սիտոն-Տոմպսոն Կախարանջիկը. . . . . 12 »
17. Գ. Շեաբ. Արագոնաւորդները. . . . . 25 »
18. Աթ. Խնկոյեան. Պապն ու շաղգամը . . . . 12 »
19. Կար. Միրիանեան. Մայրը . . . . . 12 »
20. Յովհ Թուման. Քէֆ անողին քէֆ չի պակսիլ. 20 »
21. Պուշկին. Քնած դժխուհին . . . . . 20 »
22. Ն. Սարգսեան. Թէ ինչու համար է ծաղիկը 20 »
23. Նոյն. Թէ ինչպէս են տարածւում սերմերը . 20 »
24. Կարլ Էվալդ. Տաներկու քոյր. . . . . 10 »
25. Ֆէրրս. Ցօնի համար . . . . . 10 »
26. Աթ. Խնկոյեան. Փեսացու մուկը . . . . . .
27. Աթ. Խնկոյեան. Աղէքսն ու Կռունկը. . . . . 10 »
28. Մամին-Սիբիրեակ. Ծեր ճնճղուկը, ճիճու, Պառաւ Մառանի խոստովանքը . . . . . 12 »
29. Վարդան Վարդանեան. Մարդն ու Նամարդը 10 »
30. Աթ. Խնկոյեան. Ծիսն ու Ոբբերը . . . . . 5 »
31. Էրնստ Սէտոն-Տոմպսոն. Կաղլիկ քոթոթը . . 20 »
32. Կ. Մ. Ստանիւկովիչ. Դայեակը . . . . . 20 »

## «ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ»

### խմբի հրատարակութիւնները

1. Վայրի կարասներ (սպառուած) . . 8
2. Առաջին վիշտ (սպառուած) . . . 10
3. Անտառապահը (սպառուած) . . . 12
4. Աշխէնն ու Մարգարիտը (սպառ.) . . 10
5. Աղքատի բաղդը (սպառուած) . . . 5
6. Գոհարիկն ու Ասաղիկը (սպառուած) . . 10
7. Նելլօնն ու Պատրաշը (սպառ.) . . . 10
8. Գիւղում (սպառուած) . . . . 20
9. Կենդանի՞ է արդեօք (սպառուած) . . 8
10. Բարեկամներ (սպառուած). . . . 12
11. Առակներ բնական պատմութիւնից (սպառ.) . 12
12. Մագնիս . . . . . 12
13. Արջի պատմութիւնը. . . . . 15
14. Ողնիներ . . . . . 8
15. Թմփլիկը (սպառուած) . . . . 12
16. Լեռան աղջիկը (սպառուած) . . . 20
17. Բու . . . . . 12
18. Փոքրիկ Պարոյրի արկածները . . . 15
19. Փիղ . . . . . 8
20. Ռուբէնի զբաղմունքը . . . . 25
21. Որբ Աննան . . . . . 12
22. Արցունք . . . . . 15
23. Անճնաղոհ մանուկ . . . . . 10
24. Դարևոր կաղնի . . . . . 6
25. Խրամատի եղերքին . . . . . 10
26. Լուսատիկներ . . . . . 40

27. Կատակերգութիւն գոմի բակում. . . 10
28. Նոր մայրիկս . . . . . 10
29. Բախտը ինչ ուն էր . . . . . 8
30. Եօկին և Եակին . . . . . 5
31. Փոքրիկ Լեոնի դաղտնիքը. . . . 7
32. Կարլ Լիննէյ . . . . . 20
33. Յիսուսի ծնածառը։
Մարգարտածաղիկն ու տրտուտը . . 10
34. Փոքրիկ Հարրիի պարտէզը. . . . 15
35. Արքայադուստրն ու Թզուկը . . . 10
36. Գեղեցիկ Նիւերնեզա . . . . 10
37. Աստղամանուկ . . . . . 10
38. Զանինգների ընտանիքը . . . . 30
39. Առաջին հիասթափութիւն . . . . 5
40. Աղքատ դպրոցականը . . . . 10
41. Լալին և իւր շնիկը . . . . 20

*Դիմել պահեստին՝ «Գիր» գրավաճառանոցին*— Тифлисъ, книготорговля „Гиръ“, *կամ* Редакція „Аскеръ“ (Нверъ манукнеринъ):

<< Ազգային գրադարա
NL0145088

16066

# „ՆԻԷՐ ՄԱՆՈՒԿՆԵՐԻՆ“

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. *Դատցուկ—Ամիրան Դարեջանիձէ, փոխ. Աթ. Խնկոյեանի* . . . . . 25 կ.
2. *Սէյրի—Դերձակի աշակերտը, վոդեվիլ* . 10 կ.
3. *Աղուէսն ու պուտուկը, Ոսկի ձկնիկ, Պսակ—պսակ—պատկերազարդ հեքիաթներ* . . 10.
4. *Ս. Դալաշեան. Կապիկներ, բնագիտական զրոյց* . . . . . 10

*Դիմել «Հասկերի» խմբագրութեանը.* Тифлисъ, редакція „Аскеръ“.

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊ.